ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ–երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) վերաբերյալ

Համայնքի ավանումը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ջրաշեն	Ավագանու հերթական նիստ	15.07.2021թ.	11:00	Ջրաշենի համայնքապետարան (գ. Ջրաշեն 8Փ. 32)

ՆԱԽԱԳԻԾ 21

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի ԹԻՎ 6
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ջրաշեն համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 14-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ջրաշեն համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի հաղորդման մասին:
2. Ջրաշեն համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4.Բարելավման նպատակով ուղղակի վաճառքով հողատարածք օտարելու մասին:
5.Ուղղակի վաճառքով հողատարածք օտարելու մասին:
6.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքիներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 22

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ
ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Ջրաշեն համայնքի տարեկան բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն.
1. Ընդամենը եկամուտներ - 58557.6 հազար դրամ,
2. Ընդամենը ծախսեր - 32110.3 հազար դրամ,
3. Եկամուտների գերազանցումը ծախսերին - 26447.3 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 23

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ջրաշեն համայնքի հողային հաշվեկշիռը առ 01.07.2021 թվականի դրությամբ համաձայն Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվության 22 և 22 ա ձևերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ,ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ
ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 36-րդ հոդվածներով, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ջրաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ պաշտոն զբաղեցնող Անաստաս Հակոբյանին վճարել 5%-ի չափով հավելավճար՝ համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 25 հունվարի 2021 թվականի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 02-Ա որոշման թիվ 1 հավելվածը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 25

ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Արմեն Խաչատուրի Մելքոնյանի դիմումը, հաշվի առնելով, որ հողատարածքը գտնվում է քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասի հարևանությամբ և այդ հողատարածքը բարելավելու նպատակով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն 06-095-0052-0045 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.01363 հա հողամասը կադաստրային գնով 1 քմ՝ 792 ՀՀ դրամով (0.01363քմx792=108 000 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքով օտարել համայնքի բնակիչ Արմեն Խաչատուրի Մելքոնյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**

ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Շանթ Արթուրիկի Մանուկյանի դիմումը՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն 06-095-0069-0033 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0.00199 հա հողամասը կադաստրային գնով 1 քմ՝ 792 ՀՀ դրամով (0.00199քմx792=15 800 ՀՀ դրամ) ուղղակի վաճառքով օտարել համայնքի բնակիչ Շանթ Արթուրիկի Մանուկյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 27-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԱՄՍԻՆ

/Հեկ. *ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 26-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին> թիվ 16-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱՆ ՈՒՌՈՒՍՅԱՆ**